

Ս. Ս. Մանուկյան

ՋԵԿ ԼԻՆԴՍԵՅԸ ՈՐՊԵՍ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊՐՈՊԱԳԱՆԴՈՂ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

Խաղաղության համար մղվող պայքարի ակտիվ մասնակից, անգլիական առաջավոր դրող, կոմունիստ Ջեկ Լինդսեյի գործունեության մեջ մեծ տեղ են գրավում սովետական գրականության տարածման և մասսայականացման ապարեզում կատարած նրա աշխատանքները:

Սովետական գրականության ուսումնասիրությամբ Լինդսեյը սկսել է ղրաղվել 30-ական թվականներին. թարգմանել է Շեքսպիրի, Մալակոմսկու ստեղծագործությունները, դրել մի շարք հոգվածներ, որոնք նպատակ ունեին անգլիական ընթերցողներին ծանոթացնել սովետական գրականության հետ: Այդ հոգվածներում Լինդսեյը ընդգծում է Սովետական Միության, որպես խաղաղության և ժողովրդների բարեկամության ձգտող նոր հասարակարգի ստեղծարար ուժը: Սովետական կարգերի հաստատման 20-րդ տարեդարձի առթիվ հղած իր ողջունում Ջեկ Լինդսեյը գրում է. «Ես ողջունում եմ սովետական գրականությունը, որպես աշխարհի մեծագույն գրականություններից մեկը: Մի գրականություն, որը տիրապետում է աճի ուժերին, ինքը աճում նրա հետ, ներգործում իրենի շրջապատող պայմանների վրա, կործանում բոլոր պատենշները: Այդ գրականությունը շունի երկյուղ... Դա սոցիալիստական ռեալիզմն է՝ դարգացման պրոցեսում մարդկության դինամիկ պատկերումը: Կեցցե այդպիսի գրականությունը... Նրա դերը համաշխարհային ռեուլյուցիայի գործում հսկայական է: Մեզ՝ բուրժուական կուլտուրայով դաստիարակվածներին, դժվար է ճշգրտել մեր դասակարգային կեղևը, բայց այդ կարելի է անել և մենք կանենք: Այս գործում մեզ կօգնի ձեր գրականությունը: Նա օգնում է մեզ վերափոխելու մեր կուլտուրան, հնարավորություն է տալիս մեզ՝ արագ ու համոզված լուծել մեր ներքին կոնֆլիկտները»¹:

Առելի էս ամրացնելով իր կապերը սովետական գրականության հետ, Լինդսեյը 30-ական թվականների վերջերից սկսում է թղթակցել «Ինտերնացիոնալնայա լիտերատուրա» ամսագրին, հետագայում կապ պահպանում Սովետական Գրողների Միության՝ ժամանակակից արտասահմանյան գրականությամբ ղրաղվող «Ինտերնացիոնալ կոմիսիա» բաժանմունքի հետ, մասնակցում Սովետական Միության հետ բարեկամության ձգտող «Առերթույմ» ամսագրի հրատարակման գործին և շարունակում սովետական գրականության ժողովրդականացման աշխատանքները:

1938—40-ական թվականներին «Ինտերնացիոնալնայա լիտերատուրա» ամսագրի համար ղրված հոգվածներից աշաղրության են արժանի Վ. Մայակովսկուն և Ն. Օստրովսկուն վերաբերող հոգվածները: Խոսելով Մայակովսկու մասին, Լինդսեյը նշում է, որ Մայակովսկին Անգլիայում ընդունվեց որպես սո-

¹ «Интернациональная литература», 1937, № 10, стр. 151.

ցիալիստական ռեուլյուցիայի դարաշրջանի պոետ, որի պոեզիայում միաձուլված են մտքի հասունությունը, գաղափարական հազեցվածությունը և ձևի կատարելությունը, գծեր, որոնք Մայակովսկուն դարձնում են «ժամանակի մեծագույն պոետ»²։ Ըստ Լինդսեյի, պոեզիայի պատմության մեջ Մայակովսկու ստեղծագործությունը շրջադարձային կետ է հանդիսանում, այն մեծագույն դարաշրջանի կլասիկ արտացոլումն է։ Լինդսեյը ընդգծում է Մայակովսկու պոեզիայի ակտիվ, վերափոխիչ ուժը, որը «որպես անսանձ հոսանք, բախվում է քարացած արդելքներին և կործանում նրանց»³։

Օստրովսկու «Խնչպես է կոփվում պողպատը» Լինդսեյի գնահատմամբ մի վեպ է. որը ստիպում է հպարտանալ մարդու կոշումով։ Լինդսեյը ցույց է տալիս, թե ինչպես Օստրովսկին մեծ ուժով կարողացել է պատկերել ժողովրդի ծոցից դուրս եկած անփորձ, անգրագետ երիտասարդի՝ Պավել Կորչագինի գաղափարական աճը, որն անցնելով ռեուլյուցիայի և աշխատանքի բովով, դարձել է սովետական գիտակից քաղաքացի։ «Խնքնակենսագրական այս վեպը,— գրում է Լինդսեյը,— համոզիչ է այն աստիճանի, որ կարիք չի զգում դիմելու լրացուցիչ փաստերի։ Մենք հավատում ենք հերոսի աճին, որովհետև տեսնում ենք, թե կյանքի ինչպիսի լայնածիր հորիզոններ են հայտնվում զրբի հերոս Պավել Կորչագինի առաջ»⁴։

Խոսելով վաղ շրջանի սովետական արձակի մասին, Լինդսեյը ընդգծում է այն մեծ հետաքրքրությունը, որ տածում էին անգլիական ընթերցողները Շուլիսովի, Սերաֆիմովիչի, Ֆադեևի, Գլադկովի, Լեոնովի՝ քաղաքացիական պատերազմների, երկրի վերակառուցմանն ու կուլեկտիվացմանը նվիրված վեպերի նկատմամբ։ Լինդսեյը առանձնակի նշում է անգլիական կուլտուրական կյանքի վրա Շուլիսովի թողած ազդեցությունը, որի վեպերը, ընթերցողների վկայությամբ, օժտված են գույներով, կերպարների սյնապիսի հարստությամբ, որ կարելի է համեմատության մեջ դնել նրա վեպերը 19-րդ դարի կլասիկ ստեղծագործությունների հետ։

Խնչպես նկատում է Լինդսեյը, 1939—40 թթ. միջազգային իրադրությունը թեև խանգարեց սովետական գրականության տարածմանն Անգլիայում, բայց շոշափեց անգլիական ընթերցողների հետաքրքրությունը նրա նկատմամբ։ Սովետական գրականության լայն մասսայականացումը Անգլիայում իր ցատկոն դրսևորումը գտավ հիտլերիզմի դեմ մղած պայքարի տարիներին, Պատերազմական վեպերում նկարագրված՝ սովետական ժողովրդի հերոսական պայքարը չ'րմ արձագանք գտավ անգլիական ժողովրդի լայն շրջաններում։ Լինդսեյն անգլիական առաջին գրողներից է, որ իր ձայնը բարձրացրեց ընդդեմ ֆաշիստական Դերմանիայի։ Իր հրապարակախոսական հոդվածներում և ելույթներում Լինդսեյը անարգանքի սյունին է դամում Սովետական Միության թշնամիներին, որոնք օգտվելով ստեղծված իրադրությունից, օժանդակում են ֆաշիստական ագրեսիային։

Հայրենական պատերազմի տարիներին Լինդսեյը կազմակերպում է Սովետական Միության հետ կուլտուրական կապի ընկերության գրողների սեկցիան, որը սովետական գրականության պրոպագանդան և տարածման ասպա-

² Վ. Ջե, 1940, № 7—8.

³ Վ. Ջե, 1938, № 4.

⁴ Վ. Ջե, 1937, № 5.

րեզում մեծ աշխատանք է կատարում, գրում է «Սոցիալիստական Ռուսաստան»⁵ ստեղծագործությունը, որը մի ներսւղ է՝ նվիրված Սովետական Միության խաղաղասիրական քաղաքականությանը, Գիրքը նպատակ ունի ցույց տալու խաղաղության համար մղվող պայքարում Սովետական Միության դերը, նրա ժողովրդի ստեղծարար կյանքն ու երջանիկ առօրյան։ «Ֆաշիստական Գերմանիայի հարձակումը, — գրում է Լինդսեյը, — տեղի է ունեցել առանց զորդապատճառի, և թե գերմանական կապիտալիզմի համար դրապատճառ չհամարվի ռուսական աշխատավոր ժողովրդի խաղաղասիրական առաջընթացը դեպի լավագույն ապագան»⁶։

Ետպատերազմյան քաղաքական ճգնաժամը ավելի ևս դժվարացրեց սովետական գրականության հրատարակումը Անգլիայում. միայն 1949—50 թթ. խաղաղության ուժերի աճի և ակտիվացման շնորհիվ էլ ավելի մեծ հետաքրքրություն առաջացավ սովետական գրականության նկատմամբ։ Անգլո-սովետական ընկերության «Ռաշտ Թու-դեյ» գրքի ակումբը լայն գործունեություն ծավալեց և ձեռնամուխ եղավ սովետական գրականության նորանոր թարգմանությունների։ Աժանի «Մոսկվայից հեռու», Ֆեդինի «Արտասովոր ամառը», Պավլենկոյի «Երջանկություն», Նիկոլաևայի «Հունձը», Պոպովի «Պողպատ և խարամ», էրենբուրգի վեպերը ջերմ ընդունելություն գտան Անգլիայում։ Հակառակ ռեակցիոն մամուլի ջանքերի, որն ամբողջ ֆրոնտով հարձակում սկսեց սովետական գրականության վրա, կոմունիստական և առաջավոր մամուլի էջերում տպագրվում էին բազմաթիվ հոգվածներ, որոնք ցույց էին տալիս այդ ստեղծագործությունների կարևորությունը, նրանց գաղափարական և գեղարվեստական բարձր արժանիքները։

Սովետական Գրողների Միության հրավերով 1949 թ. ամռանը Լինդսեյը գալիս է Սովետական Միություն՝ մասնակցելու Պուշկինի ծննդյան 150-ամյակին նվիրված տոնակատարությանը։ Այս ճանապարհորդությունը, որը Լինդսեյի արտահայտությամբ՝ «Նոր կյանքի հայտնություն էր», անջնջելի տպավորություն է թողնում նրա վրա և մեծ հնարավորություններ ստեղծում՝ սովետական գրականության, արվեստի հետ անմիջականորեն շփվելու համար։ Սովետական կուլտուրայից, կյանքից ու կենցաղից ստացած իր տպավորությունները Լինդսեյը վերարտադրել է «Ապագայի աշխարհը»⁷ օրագրային նոթերում, որտեղ ներկայացված է նրա ամենօրյա դիտողություններն ու տպավորությունները։ Գրքում շոշափվող հարցերը հիմնականում վերաբերում են հետպատերազմյան շրջանի սովետական կուլտուրային։ «Ես իմ ուշադրությունը կենտրոնացրել եմ, — գրում է Լինդսեյը, — ետպատերազմյան կուլտուրայի զարգացման և Սովետական Միության ներկա ժամանակի կուլտուրական իրադրության վրա, որովհետև դրանք այնպիսի հարցեր են, որոնց կապակցությամբ Իրիտանիայում ծայրահեղ տգիտություն է տիրում»⁸։ Իր այս ստեղծագործությամբ Լինդսեյը անգլիական ընթերցողին ծանոթացնում է սովետական կյանքի այն երևույթների հետ, որոնց խեղաթյուրման համար մեծագույն ճիգն են թափում պահպանողական լեյբորիստական մամուլի ներկայացուցիչները։ Հիացած մարդկային կյանքի նոր հարաբերություններով, Լինդսեյը մեծ հիաց-

⁵ J. Lindsay, *Socialist Russia. A New Social Order*, Sydney.

⁶ «Socialist Russia», page 14.

⁷ J. Lindsay, *A World Ahead. Journal of a Soviet Journey*, 1950, London.

⁸ Նույն տեղում, «Note».

մունքով է խոսում Սովետական Միության մայրաքաղաքում ստացած իր առաջին տպավորությունների մասին: Նրան զարմացնում է պուշկինյան ստեղծագործության համաժողովրդական բնույթը, մի երևույթ, որ գոյություն չունի Անգլիայում կամ կապիտալիստական որևէ այլ երկրում: Այդ խոր համակրանքի արտահայտությունը Լինդսեյին բերում է այն համոզման, որ կլասիկ գրողների ստեղծագործությունները սովետական երկրում իրոք պարձել են ժողովրդի սեփականություն: Պուշկինի հոբելյանին նվիրված ՍՍՄՄ Գիտությունների ակադեմիայի հանդիսավոր նիստում Լինդսեյը իր ելույթի մեջ ընդգծում է, որ Պուշկինը այն տիտանական անձնավորություններից է, որը մի նոր դարաշրջան է բացել իր ժողովրդի կյանքում: Սովետական Միությունը ժխտեց թըշնամական բոլոր ներշնչանքները, ապացուցելով, որ միայն սոցիալիզմի ժամանակ է հնարավոր լիովին բացահայտել կլասիկ գրականության հանձնարարությունը:

Լինդսեյը իր գրքում մեծ տեղ է տալիս գրողի և հասարակության միջև գոյություն ունեցող նոր հարաբերության հարցին: Հակառակ ուսկեցիտն այն տեսարանների, որոնք ձգտում են հեռացնել գրողին ժողովրդի պահանջներից, փաստարկելով, թե իբր իսկական գրողը չպետք է հետաքրքրվի հասարակական պրոբլեմներով, Լինդսեյը հակադրվում է նրանց, բերելով սովետական գրականության ու արվեստի օրինակը: Լինդսեյը ցույց է տալիս, որ սովետական կարգերի պայմաններում գրողի և հասարակության հարաբերությունները դրվում են այնպիսի բարձրության վրա, որի շնորհիվ հնարավոր է դառնում ձեռք բերել կուլտուրայի նորանոր նվաճումներ: Սովետական գրողները, իրենց ստեղծագործություններում արտահայտելով սոցիալիստական հասարակության հույսերը, երբեք չեն կորցնում իրենց ստեղծագործական անհատականությունը: Ժողովրդի կողմից տրված ստեղծագործական առաջադրանքի և գրողի ազատ ներշնչման միջև գոյություն չունի հակասություն, քանի որ նրանք անբաժանելիորեն կապված են միմյանց հետ: Սովետական կարգերում գրողի հոգևոր պահանջները համընկնում են ժողովրդի պահանջներին: Գրողի և ժողովրդի միջև գոյություն ունեցող այս համագործակցությունը, ըստ Լինդսեյի, իր փայլուն արտահայտությունն է դառնում դիսկուսիաների և բաղձալիքի թանարկումների ժամանակ, որոնց մասնակցելու իրավունքը լայն հնարավորություն է տալիս ժողովրդական մասսաներին՝ արտահայտելու իրենց ցանկությունները, դրսևորելու ստեղծարար ունակությունները և արմատախիլ անելու այն ամենը, ինչ խոչընդոտ է հանդիսանում սովետական արվեստի ու գրականության զարգացմանը: Խոսելով սովետական երկրում ուսու և արտասահմանյան կլասիկ գրականության լայն տարածման մասին, Լինդսեյը ժխտում է այն ուսկեցիտն կարծիքը, որ իբր սոցիալիզմի օրոք կլասիկ գրականությունը կորցնում է իր նշանակությունը: Մերժելով այս տեսակետը, Լինդսեյը գրում է. «Պուշկինը և Շեքսպիրը չեն կորցնում իրենց նշանակությունը սովետական հասարակության մեջ, ընդհակառակը, հենց այստեղ նրանք բացահայտում են իրենց ողջ դադանքները, հնչում ողջ ուժով և գտնում իրենց արժանի ընթերցողին»⁹: Լինդսեյը ընդգծում է սովետական կուլտուրայի հումանիստական խոր Լույսը, որը իր զարգացման ընթացքում, հենվելով համաշխարհային գրականության և արվեստի լուսավորյա տրոհիցիաների վրա, ստեղ-

⁹ «A World Ahead», page 31—32.

ծում է այնպիսի դրոշմեր, որոնք արտահայտում են ժողովրդի ձգտումներն ու պահանջները:

Այսպիսով Սովետական Միության մեծ ազդեցություն թողեց ինդուստրիալ հետադադարի ժամանակաշրջանի վրա: Եթե մինչ այդ նա հիմնական տեղ էր տալիս պատմական վեպին, ապա այժմ, վերագաղափարվել հայրենիք, ձեռնամուխ է լինում «Բրիտանական ապրելակերպի մասին» վիպաշարի ստեղծմանը, որը նվիրված է ժամանակակից Անգլիայի բանվոր դասակարգին և նրա պայքարին: Ժամանակակից թեմատիկային անցնելը ինդուստրիալ ստեղծագործական կյանքում պատահական երևույթ չէր: Այն տրամաբանորեն բխում է սովետական կյանքի ու գրականության հետ ունեցած անմիջական շփմանից և խաղաղության համար մղվող պայքարին նրա ցուցաբերած ակտիվ մասնակցությունից:

Այս շրջանում ինդուստրիալ գրական գործունեության մեջ առանձնակի տեղ է տալիս սոցիալիստական ռեալիզմի ուսումնասիրությանը: Այս կապակցությամբ նրա դրած հոգվածները նպատակ ունեն ցույց տալ սոցիալիստական ռեալիզմի կիրառման կարևորությունը անդլիական առաջավոր գրականության վարդապետների գործում, որի շնորհիվ միայն հնարավոր կլինի ստեղծել ժամանակակից պահանջները բավարարող, իրական գրականություն: Ինդուստրիալ ժխտում է այն կարծիքը, թե իբրև կապիտալիստական երկրներում հնարավոր չէ ստեղծագործական այս մեթոդի կիրառումը: Այս մեթոդի շնորհիվ արտասահմանյան գրողները կարող են կանգնել ստեղծագործական ճիշտ տեղում վրա և հաղթահարել այն դժվարությունները, որոնց հետ նրանք բախվում են իրենց գրական պրակտիկայում: Ժխտել այս մեթոդը նշանակում է սահմանափակել գրողի ստեղծագործական հնարավորությունները և չաջակցել ժողովրդի ազատագրման և խաղաղության համար մղվող պայքարին:

Կանոններով սոցիալիստական ռեալիզմի դիրքերի վրա, կապիտալիստական երկրի գրողը պետք է հրաժարվի գրական մի շարք հին սկզբունքներից, որոնք այլևս չեն կարող համապատասխանել նրա ձգտումներին: Սրա հետ միասին այդպիսի գրողի համար առաջնահերթ նշանակություն է ստանում ազգային տրագիկայի, կուլտուրական ժառանգության վերածնունդի հարցը, որը ժամանակակից Անգլիայում դարձել է շատ կարևոր և առաջնահերթ խնդիր: Սոցիալիստական ռեալիզմի ուղու վրա կանգնած գրողի համար մեծ նշանակություն ունի սովետական գրականության ստեղծագործական ուսումնասիրությունը, որը մեծապես օգնում է թեորոնել և պրակտիկայում կիրառելու այդ սկզբունքները: Այսպիսով, կապիտալիստական երկրում սոցիալիստական ռեալիզմի ներկայացուցիչը, եթե մի կողմից մասնակցում է սոցիալիզմի համար մղվող պայքարին, ապա մյուս կողմից նա իր ստեղծագործություններում է հիմք է դնում նոր, սոցիալիստական կուլտուրային, քանի որ այդ ստեղծագործություններում է ուրվագծվում կուլտուրայի, արվեստագետի և ժողովրդի միջև գոյություն ունեցող փոխհարաբերության հարցը: Թեև ինդուստրիալ սոցիալիստական ռեալիզմի կիրառումը անգլիական պայմաններում ընկալում է որոշ չափով պարզեցված ձևով, բայց սոցիալիստական ռեալիզմի մասին դրած նրա հոգվածները հետաքրքիր ու կարևոր են նրանով, որ հենվելով անգլիական մարքսիստական գրականագիտության և սովետական գրականության վրա, նա փորձում է տեսականորեն և գործնականորեն հիմնավորել այն, որպես առաջավոր գրականության միակ ստեղծագործական մեթոդ, ցույց տալ անգլիական առաջավոր գրականության մեջ նրա արտահայտման

յուրահատկությունները և սոցիալիզմի պայքարի լույսի տակ անգլիական ժողովրդի կուլտուրական հարուստ ժառանգության օգտագործման կարևոր նշանակությունը:

Սովետական գրականության ժողովրդականացման ասպարեզում շարունակելով իր աշխատանքները, Լինդսեյը այս նույն շրջանում հրատարակում է նիկոլայ Տիխոնովին նվիրված բանաստեղծությունների շարքը¹⁰, կոմունիստական և առաջավոր մամուլում հրապարակում սովետական վեպերի վերաբերյալ մի շարք հոդվածներ, պայքարում ռեակցիոն քննադատության դեմ: 1950 թ. Բլյա էրենբուրգի մասին «Տրիբուն» լեյբորիստական շաբաթաթերթում հրատարակվում է նախկին խմբագիր Ֆայվլի հոդվածը, որի մեջ հոդվածագիրը դրական արտահայտվելով էրենբուրգի «խուլիո խուրենիտո» վեպի մասին, աշխատում է այն հակադրել էրենբուրգի ուշ շրջանի ստեղծագործություններին: Նա առանձնապես բացասաբար է խոսում «Փարիզի անկումը» վեպի և մի շարք հոդվածների մասին: Լինդսեյը նույն շաբաթաթերթի խմբագրությանը ուղարկում է մի նամակ, որով մեղադրում է Ֆայվլին «խուլիո խուրենիտո» վեպի ոչ ճիշտ մեկնարանության համար: Այդ վեպի հակադրումը էրենբուրգի ուշ շրջանի ստեղծագործություններին արդյունք է աֆսեի, որ Ֆայվլին շատ քիչ էն ծանոթ սովետական գրականության յուրահատկությունները: Լինդսեյը հերքում է նաև Ֆայվլի այն փաստարկումը, որ էրենբուրգը իր հոդվածներում պախարակում է արևմտյան քաղաքակրթությունը, և համոզիչ ցույց տալիս էրենբուրգի ջերմ վերաբերմունքը դեպի Լվրոպական առաջավոր գրականությունն ու արվեստը: Լինդսեյը գտնում է, որ ժամանակակից անգլիական գրականության մեջ, իր շարադրման թափով, կերպարների հաջողությամբ, դադափարական բովանդակությամբ չկա մի ստեղծագործություն, որը հեռավոր չափով հիշեցներ էրենբուրգի «Փոթորիկ» վեպը, բացառությամբ, Սլյրիջի «Իիվանագետը» վեպից: «Ազնվությունը ստիպում է ինձ ընդունել, — գրում է Լինդսեյը, — որ ետպատերազմյան շրջանի սովետական վեպը ներկայացված է այնպիսի հույակապ ստեղծագործություններով, ինչպիսիք են էրենբուրգի «Փոթորիկ», Աժանվի «Մոսկվայից հեռու», Պոպովի «Պողպատ և խարամ» և այլ վեպեր, որոնք աչքի են ընկնում ստեղծագործական այնպիսի ուժով և մարդասիրությամբ, որոշի կարելի գտնել, Անգլիայի գրական արտադրանքի մեջ»¹¹:

Օժանդակելով սովետական գրականության մասսայականացման գործում «Ռաշա Թու-դեյ» գրքի ակումբի գործունեությանը, Լինդսեյը «Ռաշա Թու-դեյ» ամսագրի էջերում 1951 թ. ընթացքում հրապարակում է բուրենովի «Սպիտակ կեչին», Պոպովի «Պողպատ և խարամ» և Պալենկոյի «Երջանկություն» վեպերի մասին հոդվածներ, որոնց մեջ փորձում է վեր հանել սովետական հայրենիքի պաշտպանության, նրա վերակառուցման ու բարդավաճման համար պայքարող սովետական մարդկանց գործունեության այն էական գծերը, որոնց շնորհիվ սովետական մարդիկ ոչ միայն պարտության մատնեցին թշնամուն, այլև կարճ ժամանակամիջոցում վերականգնեցին սովետական տնտեսությանն ու արդյունաբերությանը պատճառած վնասները:

Պավլենկոյի «Երջանկություն» վեպին նվիրված հոդվածում¹² Լինդսեյը

¹⁰ J. Lindsay, Three Letters to Thikhonov, 1950, Denver.

¹¹ «Tribune», 1950, 1/IX.

¹² J. Lindsay, The Sense of Overbrimming Life, «Russia To-day» 1951, April, page 20.

ընդգծում է այն հզոր ստեղծարար ուժը, որը թաքնված է սովետական մարդկանց մեջ: Ինչպես նկատում է Լինդսեյը, ֆրոնտից վերադարձած հաշմանդամ մարտիկի կյանքի նկարագրման օրինակով Պավլենկոն ցույց է տալիս ժողովրդի ստեղծարար կյանքի այն խոր ակունքները, որոնք օգնում են հույեկան կայունությունը ժամանակավորապես կորցրած մարդուն գտնել իր տեղը հասարակության մեջ, դառնալ այդ հասարակության ակտիվ ու ցործոնյա անդամներից մեկը:

Ըստ Լինդսեյի, Պավլենկոյի վարպետությունը առանձնապես ցայտուն է դրսևորվում վեպի գլխավոր հերոս Վարուպեի անհատական ձգտումները հասարակական վերածվելու բարդ պրոցեսի վերարտադրման ժամանակ: «Սևփական տան կառուցման սեկսուն դադափարը,— դրում է Լինդսեյը,— անցնում է անհատական և հասարակական մղումների միջով, փոխադարձաբար լրացնում և հարստացնում միմյանց»¹³:

Խոսելով «Երջանկություն» վեպի թեմայի մասին, Լինդսեյը քննության նյութ է դարձնում այն հակադրությունը, որ գոյություն ունի անդլիակա՝ աշխատավորության և սովետական ժողովրդի կյանքի պայմանների միջև: Ինչպես կզդար իրեն ֆրոնտից վերադարձած անգլիացի հաշմանդամ մարտիկը այդպիսի պայմաններում,— ահա այս հարցի առջև է կանգնեցնում Լինդսեյը իր ընթերցողին և տրված հակադրություն, սեյդ ու հակիրճ շարադրում է Վարուպեի հոգեկան տաղանապի հաղթահարման տեղիները, որոնք այնքան տիպական են սովետական մարդու համար:

Հակառակ բուրժուական գրաքննադատության հատուկ միտումներին՝ ապացուցելու, որ իբր սովետական վեպերում բացակայում է հերոսների անհատական զգացմունքների և ձգտումների նկարագրությունը, Լինդսեյը իր այս հոդվածում բազմիցս նշում է, որ Վարուպեի հոգեկան հավասարակշռության կայունացման մեջ մեծ դեր են կատարել ոչ միայն նրան շրջապատող պայմանները, այլև սերը դեպի Գորևան ու ջերմ զգացմունքները դեպի Լենա Ժուրինան:

Լինդսեյը նշում է, որ ինչպես սովետական այլ լավագույն վեպերը, այնպես էլ «Երջանկություն» վեպը օժտված է զեղարվեստական մի շարք արժանիքներով, որոնք ընդգծում են Պավլենկոյի, որպես գեղարվեստագետ գրողի, մեծ վարպետությունը: Խոսելով կերպարների կերտման, նրանց բնութագրման ու տձական առանձնահատկությունների մասին, Լինդսեյը վերարտադրում է ծովափնյա քաղաքը պատկերող այն հատվածները, որտեղ Վարուպեը երազում է բնակություն հաստատել:

Ավարտելով իր հոդվածը, Լինդսեյը եզրակացնում է, որ Պավլենկոյի վեպը ներծծված է կյանքի հաստատման մեծագույն ավյունով, երջանկություն ստեղծելու անդիմադրելի ցանկությամբ, մի երազանք, որի իրականացումը հնարավոր է միայն Սովետական Միության մեջ:

Վ. Պոպովի «Պողպատ և խարամ» վեպի հետ Լինդսեյը ծանոթացել է 1949 թ. Կիևում, զրոգների հետ ունեցած հանդիպման ժամանակ: Լինդսեյը այդ վեպի մասին գրած իր հոդվածում¹⁴ փորձում է անգլիական ընթերցողին ծանոթացնել Հայրենական Մեծ պատերազմի ամենալարված մոմենտներից մեկին նվիրված ստեղծագործության հետ:

¹³ Ն ու յ ն տ ե գ ու մ, էջ 20:

¹⁴ J. Lindsay, Steel and Slag, «Russia To-day», 1951, July, page 16.

Ցույց տալով հեղինակի ձգտումը՝ վերարտադրել մեծագույն փորձություններով ու հերոսականությամբ չի հայրենի երկրի պատմության վճռական ու կարևոր շրջաններից մեկը, Լինդսեյը ուշադրությունը կենտրոնացնում է վեպի հանգուցային մոմենտների վրա, որոնք ավելի խորն են դրսևորում ստեղծագործության մեջ առաջադրած գաղափարները:

Լինդսեյի կարծիքով, Պոպովի վեպի վերնագիրը իմաստավորվում է ոչ միայն արտադրության հին և նոր ձևերի միջև ընթացող պայքարով, այլև սոցիալիզմի տղին բռնած մարդկային հասարակության գործունեության այն ողջ պրոցեսով, որի ժամանակ «ոմանք մի կողմն են նետվում որպես խարամ, իսկ մյուսները ավելի գեղեցկորեն կոփվում են որպես պողպատ»¹⁵: «Չնայած իրենց քանակական գերակշռության,—գրում է Լինդսեյը,—նացիստները և նրանց համագործակիցները հանդիսանում են պատմական պրոցեսի խարամ, իսկ սովետական միասնական ժողովուրդը՝ ապագայի փորձված ու վստահելի պողպատ»¹⁶:

Այսպիսով, ըստ Լինդսեյի, Պոպովի վեպում պողպատի ձուլման պատմությունը դառնում է մարդկային պատմություն, անհատների պատմություն, տրոսիցից յուրաքանչյուրն ունի իր սեփական ձգտումներն ու սրբությունները:

Աժանի «Մոսկվայից հեռու» վեպին նվիրված հոդվածում¹⁷, Լինդսեյը խոսում է այն առանձնահատկությունների մասին, որոնք հատկանշական են սովետական վեպերին: Համեմատելով վերջին երեսույն տարիների ընթացքում հրատարակված սովետական վեպերը նույն ժամանակաշրջանի անգլիական և ամերիկյան վեպերի հետ, Լինդսեյը ցույց է տալիս, որ հակառակ անգլո-ամերիկյան վիպագրության մեջ տեղի ունեցած քայքայման, սովետական վեպը աչքի է ընկնում իր թեմատիկ բազմազանությամբ, խորությամբ ու հարստությամբ: Լինդսեյը այս երևույթը չի կապում հիշյալ երկրներում տաղանդավոր գրողների բացակայության կամ լավագույն վեպեր ստեղծելու անընդունակության հետ: Պատճառն այն է, որ այդ երկրների տաղանդավոր, նոր կյանքի ջատագով գրողները գործում են քայքայվող հասարակության ծանր բեռի տակ, որը հնարավորություն չի տալիս նրանց լիարժեք ու բազմակողմանի զարգացնել իրենց ունակությունները:

Լինդսեյը սովետական վեպի զարգացման կարևոր գործոններից մեկը համարում է նոր գրականության անընդհատ հարստացումը՝ կլասիկ դրականության ժառանգության օգտագործմամբ, իսկ մյուսը՝ գրողի անմիջական մասնակցությամբ հասարակական կյանքի զարգացմանը:

Ըստ Լինդսեյի, Աժանը փորձում է աշխատանքի պրոցեսի ֆունկցիոնալ կերել սովետական մարդկանց և կոլեկտիվի նոր փոխհարաբերությունները, անհատական և հասարակական հետաքրքրությունների միաձուլման տղջ պրոցեսը:

Վեպը, որ վերաբերում է պատերազմի սկզբնական շրջանին և պատկերում է Հեռավոր Արևելքի տայգաներում նախամոլոխի կառուցման աշխատանքը, Լինդսեյի կարծիքով, շատ է հետաքրքրական, բայց այն չէր կարելի անվանել նոր տիպի գեղարվեստական գրականություն, եթե այդ տեխնիկական պայքարի

¹⁵ «Russia To-day», 1951, July, page 16.

¹⁶ Там же, 1951, July.

¹⁷ J. Lindsay, The New Man, «Labour Monthly», 1951, № 11, page 541.

յուրաքանչյուր կողմը պատկերված չլինել որպէս մարդկային կյանքի վերածնություն, որպէս անհատների միջև ընթացող ուժեղ պայքար:

Պատասխանելով պահպանողական «Բայմս» թերթի դրական հավելվածում տպագրված «Մոսկվայից հեռու» վեպի քննադատությանը, Լինդսէյը շեշտում է, որ շնայած վեպում կան որոշ թերություններ, այնուամենայնիվ Աժակին հաջողվել է հանդես բերել սոցիալիստական դարաշրջանի նոր մարդուն, որի ողջ գործունեությունը կապված է իր դասակարգի և հայրենիքի հետաքրքրությունների հետ: Անտեսել այս, նշանակում է աղճատել վեպի հիմնական գաղափարը, ոչնչացնել նրա կենսական ուժն ու նշանակությունը:

«Վկայություն, որը չի կարող ստեղծել», այսպէս է վերնագրել Լինդսէյը Բուբենովի «Սպիտակ կեղին» վեպին նվիրված իր հոդվածը¹⁸: Առաջին իսկ էջերում Լինդսէյը հաստատում է այն միտքը, որ սովետական ժողովրդին ճանաչելու կարևոր գործոններից մեկը նրա գրականության ուսումնասիրությունն է: Սովետական գրականությունը, որը հանդիսանում է հումանիստական ձգտումների արտահայտիչը, խաղաղության ու ազատության կրքոտ պաշտպանը չի կարող Լերբեք կեղծել իրականությունը: Իր այս միտքը Լինդսէյը զարգացնում է Բուբենովի վեպի վերլուծության ժամանակ, ցույց տալիս, որ տվյալ ստեղծագործության հերոսական ողջ ոգին նվաճում է տ'չ թե այս կամ այն կերպարի հերոսական գործունեության նկարագրության մը, այլ դեպքերի շարադրման ճշտությամբ, կերպարների անհատական աճի կամ անկման մեջ ներթափանցման շնորհիվ:

Խոսելով վեպի գեղարվեստական արժանիքների մասին, Լինդսէյը նկատում է, որ Բուբենովը, բանաստեղծական մեծ ուժով նկարագրելով Հայրենական պատերազմի առաջին ամիսների գործողությունները, վերարտադրել է նրանց ո'չ միայն տեղական շարադրանքի, այլև պէյզաժի, բնության հետ մշտական կապի և առաջին հերթին սպիտակ կեղու նկարագրման միջոցով, որը վեպում հանդես է գալիս որպէս սովետական խաղաղ կյանքի խորհրդանիշ: Վեպից մեջբերված հատվածները նպատակ ունեն ցուցադրելու Բուբենովի դեղարվեստական մեթոդի մի շարք կողմերը, հեղինակի ձգտումը՝ շաղկապելու ընթացիկ դեպքերը, հերոսների հոգեկան ապրումներն ու մտորումները հայրենի պէյզաժի հետ:

Առանձնակի կանգ առնելով սպիտակ կեղու պատկերի օգտագործման մի շարք կողմերի վրա, Լինդսէյը ցույց է տալիս, թե ինչպէս վեպում կեղին դառնում է ընտանեկան օջախի, ազատ Ռուսաստանի և տիրո խորհրդանիշ: Քամու և թնդանոթների որոտի մեջ ուղիւն կտրցրած դումարտակի դինվորները, տեսնելով միայնակ ու հպարտ կանգնած կեղուն, որը կարծես մարտակոչ էր նետում շուրջը սփռվող ավերածությանը, զգում են, որ նա կմնա կանգնած ու կենդանի, որովհետև անսասան է մայր երկրի ուժը, աննկուն են նրա որդիները: Անգրէյի և Մարիյկայի փոխհարաբերության նկարագրման ժամանակ Լինդսէյը կանգ է առնում նույնպէս սպիտակ կեղու օգտագործման պատկերի վրա: Կեղինների սովերի ներքո այդ պույգի հրաժեշտի տեսարանը, ըստ Լինդսէյի «Բուբենովի բանաստեղծական վարպետության հիանալի պատկերներից» է¹⁹, որտեղ այդ կերպարները միաձուլվում են բնության և մայր հողի հետ:

¹⁸ J. Lindsay, A Witness that Cannot Lie, „Russia To-day“ 1951, Mart, page 16.

¹⁹ „Russia To-day“, 1951, Mart, page 16.

Սովետական վեպերի մասին Լինդսելի գրած հոդվածները, իհարկե, դերժ չեն թերություններից: Երբեմն նրանց մեջ անտեսվում են զբաղվող հերոսների գործունեության օբյեկտիվ գրգռապատճառները և շեշտը ավելի դրվում է նրանց հոգեկան ապրումների նկարագրման վրա: Բայց այդ ամենով հանդերձ, Լինդսելը կարողացել է վեր հանել այդ ստեղծագործությունների հիմնական դադափարը, ցույց տալ սովետական մարդուն իր գործունեության բազմազան բնագավառները, բացահայտել ևրջանիկ կյանքի ապագան կերտող նոր մարդու էությունը, սովետական երկրում աշխատանքի ստեղծարար ուժը: Իր այս հոդվածներով Լինդսելը օգնում է անգլիական ընթերցողներին, ճիշտ հասկանալ սովետական դրականությունը, պաշտպանել նրան ուսկիցիոն բնագաղատության հարձակումներից և ցույց տալ այն ուղիները, որոնցով պետք է ընթանան առաջավոր դրականության զարգացումն Անգլիայում:

1954 թ. սովետական գրողների երկրորդ համագումարին մասնակցելու համար Լինդսելը նորից հրավիրվում է Սովետական Միություն: Այս այցելությունը ավելի ևս ամրացնում է նրա բարեկամական կապերը սովետական գրողների հետ, հնարավորություն տալիս մոտիկից ծանոթանալու Սովետական Միության բազմազգ ժողովուրդների գրական ստեղծագործական կյանքի հետ: Մինչև համագումարի սկիզբը Լինդսելը մի շարք հանդիպումներ է ունենում գրողների, Մոսկվայի օտար լեզուների մանկավարժական ինստիտուտի ուսանողների հետ, ներկա գտնվում գրողների և ընթերցողների հանդիպումներին, մասնակցում Հենրի Ֆիլդինգի մահվան 200-ամյակին նվիրված հանդիսավոր նիստին:

Համագումարի օրերին Լինդսելը ակտիվառես է լինում սովետական ռեսպուբլիկանների ազգային գրականության նվաճումներին: Նրան զարմացնում է այն վերելքը, որ ապրում է Լոբայրական ռեսպուբլիկանների գրականությունը:

Ծանոթ լինելով հայ ժողովրդի դարավոր կուլտուրային, Լինդսելը փրողջուն է հղում Սովետական Հայաստանին: «Ինձ վրա մեծ տպավորություն գործեցին Սովետական Ռեսպուբլիկանների հսկայական նվաճումների մասին գրողների համագումարում Լույս լուսեցած հոստոնների պատմածները, — գրում է Լինդսելը, — համագումարում ևս հետաքրքիր հանդիպումներ ունեցա շատ գրողների հետ: Նրանցից Մարիետտա Շախնյանը ինձ նվերեց մի գիրք, որը ևս վաղուց ցանկանում էի ունենալ՝ գիրք հայ ժողովրդի մեծ էպոս «Սասունցի Դավիթ»-ի մասին:

Վերջին տարիները ևս շատ եմ ուսումնասիրել Եվրոպական քաղաքակրթության ակունքները և այն դերը, որ խաղացել է այդ քաղաքակրթության մեջ բյուզանդական կուլտուրան, ինչպես նաև այն կարևոր ավանդը, որ մշտյորել է Եվրոպական և համաշխարհային կուլտուրայի մեջ այնպիսի երկիր, ինչպիսին Հայաստանը... Ես օգտվում եմ առիթից, որպեսզի ուղջունեմ հայ ժողովրդի կուլտուրայի բուռն զարգացումը»²⁰:

Ուշադիր հետեւելով մինչև համագումարը կազմակերպված գրականադիտական դիսկուսիաներին և համագումարի ընթացքում առաջադրված հարցերին, Լինդսելը գտնում է, որ այդ հարցերը մոտ են անգլիական ազգային կուլտուրայի զարգացման պրոբլեմներին: Համագումարի աշխատանքները, ըստ Լինդսելի,

²⁰ «Սովետական Հայաստան», 1954, 23/XI:

հնարավորություն կտան սնվելիական առաջավոր դրողներին արագ և ճիշտ լուծել իրենց առջև դրված խնդիրները:

Սոցիալիստական ռեալիզմի մեթոդի միջոցով դրական հերոսի պրոբլեմի, ժողովրդական կյանքի ճանաչողության, կյանքի հարուստ ու բազմակողմանի արտացոլման և այլ խնդիրների լուծումը պրակտիկ մեծ նշանակություն կարող են սնենալ այն պայքարի համար, որ մղում են Անգլիայի առաջավոր ուժերը:

Համադրումարում արտասանած իր ճառում, Լինդսեյը կանգ է առնում կապիտալիստական երկրների գրականության մեջ սոցիալիստական ռեալիզմի մեթոդի կիրառման հարցի վրա, խոսում վերջին տարիների իր դրական պրակտիկայի մասին: Սոցիալիստական ռեալիզմի մեթոդով դրված ստեղծագործությունները, Լինդսեյի կարծիքով, սերտ կապի մեջ պետք է լինեն ազգային կյանքի դրականության և ազգային տրագիդիաների հետ, որ առաջավոր դրողը մի կողմից՝ պետք է պայքարի սոցիալիզմի հաղթանակի, իսկ մյուս կողմից՝ սոցիալիստական կուլտուրայի հիմքերի հաստատման համար: Սովետական գրողների երկրորդ համադրումարը, որը Լինդսեյի զնահատմամբ սոցիալիստական ռեալիզմի թեորիայի և պրակտիկայի բնագավառում վճռական քայլ է հանդիսանում, մեծ օգնություն ցույց կտա ողջ աշխարհի առաջավոր գրողներին: Արտասահմանյան առաջավոր գրականության համար այս մեթոդը բացում է նոր մեծագույն հնարավորություններ և օգնում կապիտալիստական երկրների առաջավոր գրողներին՝ դադարաբանական և դեզարվեստական բարձր արժանիքներով օժտված գործեր ստեղծելու խնդրում:

Կարևոր է նշել, որ Լինդսեյը հետ չկանգնեց սոցիալիստական ռեալիզմի սկզբունքների պաշտպանությունից և այն պահին, երբ Արևմուտքի դրական ինտելիգենցիայի մի շարք շրջաններում կալմալերապիված գրոհ սկսվեց սովետական գրականության գեղարվեստական մեթոդի դեմ:

Սոցիալիստական ռեալիզմի հիմնական սկզբունքների պաշտպանությունը Լինդսեյի մոտ մնաց անսասան նաև այն ժամանակ, երբ վերջին տարիներին միջազգային իրադարձությունների կապակցությամբ Լինդսեյը չկարողացավ ճիշտ կողմնորոշվել այնպիսի Կարևոր հարցերում, ինչպիսիք են անհատի պաշտամունքը, հունդարական դեպքերը և այլն: Բայց ինչպես ցույց տվեց պրակտիկան, Լինդսեյի այդ տեսակի տատանումները չունեն խոր ակունքներ, այդ են վկայում Ֆաստի գործունեության դեմ ուղղված նրա երկյթը և մի շարք հոդվածներ, որոնք վճռականապես դատապարտում են սովետական գրականության ստեղծագործական մեթոդը, ռեալիզմի ենթարկելու փորձերը: Իսկ ինչ վերաբերում է Լինդսեյի գործունեությանը 1954 թ. սկսած մինչև մեր օրերը, սովետական գրականության պրոպագանդման և ժողովրդականացման ասպարեզում, ապա կարելի է նշել, որ նա նույն եռանդով շարունակում է իր աշխատանքները: Այս է վկայում 1957 թ. Լինդսեյի կողմից «Ռուսական Սովետական պոեզիայի» անթոլոգիայի²¹ հրատարակումը Լոնդոնում, որտեղ հավաքված են 1917—1955 թթ. բնագրերում ստեղծված սովետական ականավոր ռուս պոետների լավագույն ստեղծագործությունները, որոնց թարգմանությունը կատարել է ինքը՝ Լինդսեյը: Անթոլոգիայի մեծածավալ առաջարկում, Լինդսեյը

²¹ Russian Poetry 1917. Selected, translated and with an introduction by J. Lindsay, London, 1957.

անգլիական ընթերցողներին հանգամանորեն ծանոթացնում է 20-րդ դարի ռուսական պոեզիայի հիմնական ուղղությունների հետ, ռուսական պոեզիայի զարգացումը կապելով 1905—1917 թթ. ռեոլյուցիոն փրադրոթյան հետ։ Սկզբում մանրամասն կանգ առնելով Մայակովսկու ստեղծագործությունների պոետական ձևի առանձնահատկությունների վրա, Լինդսելը անցնում է Տիխոնովի, Սելվինսկու, Լուկոնինի, Սիմոնովի, Տվարդովսկու և այլ պոետների բանաստեղծությունների քննարկմանը։ Պահպանելով անթուղիայում տեղ գտած ստեղծագործությունների ժամանակագրական կարգը, Լինդսելը կարողանում է ընթերցողներին ցուցադրել սովետական պոեզիայի զարգացման ողջ ուղին։

Անգլիական առաջավոր մամուլը բարձր գնահատեց այս աշխատանքը։ «Ուորլդ Նյուզ» ամսագիրը²², նշելով բանաստեղծությունների թարգմանությունների վարպետությունը և անթուղիայում տեղ գտած ստեղծագործությունների գաղափարական ու գեղարվեստական հասունությունը, իր համոզմունքն է հայտնում, որ անթուղիան մեծ բավականություն կպատճառի անգլիական ընթերցասեր լայն մասսաներին։

²² „World News“, 1957, May, page 335.